# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

3 փետրվարի 2021 թվականի N6-Ա

***ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի փետրվարի 1-ին <<Մաչանյան Կարեն>> /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ԱՁ-ի կողմից հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի և 2021 թվականի հունվարի 27-ի **Էմմա Պապոյի Թորոսյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Քաղաքացիներ **Էմմա Պապոյի Թորոսյանին, Վալերիա Հովհաննեսի Թորոսյանին, Գայանե Վալերիայի Թորոսյանին և Հովհաննես Վալերիայի Թորոսյանին** համասեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2-ին փողոցի N3 հասցեում գտնվող 0,082 հեկտար հողամասի /կադաստրային ծածկագիր 04-065-0056-0011/ վրա 2005 թվականին ինքնակամ կառուցված 180,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 27,1 քառակուսի մետր ավտոտնակը, 15,5 քառակուսի մետր տնտեսական սենյակը և 10,4 քառակուսի մետր պարիսպը ճանաչել օրինական:

2. Սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված.

1) բնակելի շինությունների օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է.

180,9 քառակուսի մետր բնակելի տան օրինականացման վճարը կազմում է

180,9 x 1700=307 530 ՀՀ դրամ.

2) ավտոտնակի, տնտեսական սենյակի և պարիսպի օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1020 ՀՀ դրամ է.

27,1 քառակուսի մետր ավտոտնակի, 15,5 քառակուսի մետր տնտեսական սենյակի և 10,4 քառակուսի մետր պարիսպի օրինականացման վճարը կազմում է

(27,1 +15,5+10,4)x 1020=53,0 x 1020=54060 ՀՀ դրամ.

Վճարման ենթակա է՝ ընդամենը 361 590 ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարները 30-օրյա ժամկետում պետք է վճարվի Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվական փետրվարի 3

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

3 փետրվարի 2021 թվականի N7-Ա

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետից 2021 թվականի հունվարի 25-ին ստացված թիվ 01/20/00298-21 գրությունը, որոշում եմ .

1.Համայնքում օպերատիվ ազդարարումը պատշաճ կերպով իրականացնելու և ազդարարման սարքավորումը (էլեկտրաշչակը) սարքին վիճակում պահելու նպատակով պատասխանատու նշանակել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանին:

2. Ազդարարման սարքավորումը (էլեկտրաշչակը) ներառել համայնքապետարանի գույքային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվական փետրվարի 3

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2021 թվականի N8-Ա

***ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱԼՈԴԻ, ՄԵՐՐԻ ԵՎ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի փետրվարի 16-ին <<Մաչանյան Կարեն>> /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ԱՁ-ի կողմից ստացված հողամասի բաժանման հատակագծի և 2021 թվականի փետրվարի 17-ին **Մերրի Վարդանի Սարգսյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 1-ին փողոցի թիվ 33 հասցեում գտնվող քաղաքացիներ **Վարդան Պետրոսի, Հասմիկ Վալոդի, Մերրի և Մարիամ Վարդանի Սարգսյաններին** համասեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր 04-065-0029-0008/ հողամասից առանձնացվող 400,0 քառակուսի մետր հողամասին՝ /Կողմ 2/ ըստ հողամասի բաժանման հատակագծի, տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 1-ին փողոց թիվ 33/1:

Նույն հողամասից առանձնացվող մյուս՝ 427,0 քառակուսի մետր հողամասին /Կողմ 1/ թողնել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան 1-ին փողոց թիվ 33 հասցեն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի փետրվարի 18

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2021 թվականի N9-Ա

***ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի N55-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի **Ֆենյա Արտյոմի Մուրադյանին** տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ **Տիգրանուհի Ֆրունզիկի Գրիգորյանի** ծննդյան կապակցությամբ /ծնված 2021 թվականի փետրվարի 10-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ359484, տրված Վաղարշապատ ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից՝ 2021 թվականի փետրվարի 12-ին/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի փետրվարի 18

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2021 թվականի N10-Ա

***ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի **Անահիտ Օնիկի Հակոբյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն սկեսուրի՝ **Սվետլանա Սեդրակի Հովհաննիսյանի** մահվան համար /մահացել է 06.02.2021թ., հիմք մահվան վկայական ԲԱ359843, տրված 12.02.2021թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի փետրվարի 18

համայնք Մերձավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2021 թվականի N11-Ա

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի հունվարի 29-ին <<Մաչանյան Կարեն>> /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ԱՁ-ի կողմից հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի և 2021 թվականի հունվարի 26-ի **Գևորգ Ռուբիկի Անդրեասյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Քաղաքացի **Գևորգ Ռուբիկի Անդրեասյանին** համասեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի N4 հասցեում գտնվող 0,08 հեկտար հողամասի /կադաստրային ծածկագիր 04-065-0001-0013/ վրա 2018 թվականին ինքնակամ կառուցված արտաքին մակերեսներով 184,0 քառակուսի մետր բնակելի տունը, 43,0 քառակուսի մետր ծածկը, 35,4 քառակուսի մետր թռչնանոցը, 4,5 քառակուսի մետր զուգարանը, 15,4 քառակուսի մետր թռչնանոցը և 2,9 քառակուսի մետր պարիսպը ճանաչել օրինական:

2. Սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված.

1) բնակելի շինությունների օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է.

184,0 քառակուսի մետր բնակելի տան օրինականացման վճարը կազմում է

184,0 x 1700=312 800 ՀՀ դրամ.

2) ծածկի, թռչնանոցների, զուգարանի և պարիսպի օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1020 ՀՀ դրամ է.

43,0 քառակուսի մետր ծածկի, 35,4 քառակուսի մետր թռչնանոցի, 4,5 քառակուսի մետր զուգարանի, 15,4 քառակուսի մետր թռչնանոցի և 2,9 քառակուսի մետր պարիսպի օրինականացման վճարը կազմում է

(43,0+35,4 +4,5+15,4+2,9)x 1020=101,2 x 1020=103224 ՀՀ դրամ.

Վճարման ենթակա է՝ ընդամենը 416 024 ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարները 30-օրյա ժամկետում պետք է վճարվի Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվական փետրվարի 18

համայնք Մերձավան